ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

N _____

"___ " _____ 2019 թ.

0047 ՀՀ Երևան, Նորք-Մարաշ, Ա.Արմենակյան փ. 129
(374-10) 65-05-53, 65-46-95
Ֆաքս. (374-10) 65-16-60
Էլ. փոստ info@aatm.gov.am

ՏԵՂԵԿԱՆՔ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բյուջեյով նախատեսված չի եղել դատական ծախսերի հատուցման համար ֆինանսական միջոց, քանի որ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2018 թվականին հարուցել է 208 վարչական վարույթ և վերջիններիս մասով դատական կարգով չեն բողոքարկվել, իսկ 2019 թվականի ընթացքում՝ շուրջ 2000 վարչական վարույթ, ինչպես նաև վիճակագրական դինամիկան ցույց է տալիս, որ հարուցված վարչական վարույթների մասով դատական կարգով բողոքարկվող գործերը էականորեն ավելացել են:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վարչական վարույթի շրջանակներում Տեսչական մարմնի իրավանախորդ հանդիսացող Տեսչության գործերից շուրջ 60 գործ դատական կարգով բողոքարկվել է և գործի ընթացքից երևում է, որ ամենայն հավանականությամբ վերջիններիս մասով դրական ելք չի ակնկալվում և դատական ծախսերի բեռը հանդիսանալու է Տեսչական մարմնի կողմից վճարվող գումար:

Նշենք նաև, որ արդեն իսկ կան գործեր, որոնց մասով դատական գործերը ստացել են այնպիսի ելք, որի արդյունքում տվյալ պահին կրում ենք պարտավորություն դատական կարգով առաջադրված գումարների վճարում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է (...) մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նշվածից հետևում է, որ երբ դատական կարգով վիճարկվում է Տեսչական մարմնի կողմից կայացված վարչական ակտերի իրավաչափությունը և գործի քննության արդյունքում անվավեր է ճանաչվում վիճարկվող վարչական ակտը, տվյալ պարագայում Տեսչական մարմինը որպես կողմ, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, պարտավոր է կրել դատական ծախսերի հատուցման պարտականությունը:

Հարկ է նաև նշել, որ 2018 թվականին Տեսչական մարմինը ռիսկի վրա հիմնված ստուգումներ չի իրականացրել՝ ՀՀ կառավարության որոշման բացակայության հիմքով, իսկ 2019 թվականին արդեն իսկ նշված (Տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին) կառավարության որոշման նախագիծը շրջանառության մեջ է և հաստատման փուլում է, որի հաստատումից հետո Տեսչական մարմնի կողմից կսկսվեն ռիսկի հիման վրա տնտեսավարող սուբյեկտներում ստուգումները և նույն տրամաբանությամբ կավելանան նաև ակտի դիմաց դատական կարգվող բողոքարկվող գործերի քանակը: Այդ իսկ կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել դատական կարգվող բողոքարկվող գործերի մասով նախատեսել ֆինանսական միջոցներ:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տեսչական մարմնի կողմից դատական կարգով բողոքարկվող և վերջինիս արդյուքում պարտավորություն առաջացող գործերի մասով անհրատեսական է քանակագումարային տվյալների կանխատեսումը: Դատական ծախսերի մասով կանխատեսվող նախահաշվային գումարների հատկացումը կարևոր է նաև այն հանգամանքից ելնելով, որ նշված դրամական միջոցների բացակայության և Տեսչական մարմնի կողմից գումարի բռնագանձման մասով դատական ակտի չկատարման արդյունքում վերջինիս պարտավորության կատարումը բռնագանձնում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ակտերի հարկադիր կատարումը պետական բյուջեի մասով առաջացնում է լրացուցիչ պարտավորություն:

Հետևաբար, դատական ծախսերի համար անհրաժեշտ է շուրջ 1.747.000 ՀՀ դրամ գումար, որը 2019 թվականի բյուջեով նախատեսված չի եղել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ ԷՄԻՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատարող՝ ռիսկի գնահատման,
ստուգումների պլանավորման և
վերլուծությունների վարչություն
Հեռ. (+37410 65 96 45 * 14, 31, 25)